



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<10>> հուլիսի 2024թ.

N ՄՈ/314 -Ա

ք. Արմավիր

**«ՖԵՐԻԿԻ ՌԶԱԼԻԵ ՌԱՇԻԴԻ ՕԶՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱՐԻՆԵ
ՖԱՐՖԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Նարինե Ֆարֆարյանի 2024 թվականի հուլիսի 8-ի դիմումը.

ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Ֆարֆարյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը 2024 թվականի հուլիսի 22-ից օգոստոսի 23-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Նարինե Ֆարֆարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց»

պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Լիանա Ենգիբարյանին:

3. «Ֆերիկի Ռզայիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Լիանա Ենգիբարյանի աշխատավարձի վճարումը 2024 թվականի հուլիսի 22-ից օգոստոսի 23-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Նարինե Ֆարֆարյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի օգոստոսի 26-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝



eID

Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ